Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի ԹԻՎ ԹԻՎ 27-Ն-45 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ թիվ 27-Ն, 28 և 41 որոշումների նախաբաններում «հիմք ընդունելով» բառերից հետո անհրաժեշտ է գրառել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի» բառերը:

Թիվ 27-Ն որոշման 4-րդ կետում գրառված «116172.0,0» թիվը փոխարինել «116172.0» թվով:

Թիվ թիվ 28-45 որոշումների հերթական համարներից անմիջապես հետո անհրաժեշտ է նշում կատարել որոշման իրավական ակտի բնույթի մասին:

Թիվ 28 որոշման 1-ին և 2-րդ կետերի սկզբում անհաժեշտ է գրառել համայնքի լրիվ անվանումը և բյուջեի տարեթիվը որից կատարվել է հատկացումներ:

Թիվ 29 որոշումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու կողմից ներկայացվել է ժամկետի խախտումով: Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքի ղեկավարը բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումը համայնքի ավագանուն և մարզպետին պետք է ներկայացնի եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը:

Որոշման բաղկացուցիչ մաս կազմող թիվ թիվ 1-3 հավելվածները Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից կնքված և ստորագրված չեն:

Թիվ 30 որոշման հղումը ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմանը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջին:

Թիվ 31 որոշման նախաբանում 11-րդ կետով բառը փոխարինել 11-րդ մասով բառով, իսկ «հիմք ընդունելով» բառերից հետո գրառված «համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու» բառերով:

Թիվ 33 որոշմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2022 թվականի բյուջեի գործառական դասակարգման Բաժին 10, խումբ 07, դաս 01 սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) և տնտեսագիտական դասակարգման (այլ նպաստներ բյուջեից) 4729 հոդվածում նախատեսված գումարից՝ համաձայն որոշման հավելվածի 8-րդ կետի՝ Սեդա Մկրտչյանին հատկացվել է ընդամենը 35000 /երեսունհինգ հազար/ դրամ դրամական օգնություն, սակայն վերջինս չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Իսահակյան բնակավայրի բնակիչ: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքի բնակիչ է այն անձը, որը հաշվառված է տվյալ համայնքի բնակչության ռեգիստրում: Սեդա Մկրտչյանը հաշվառված չէ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Իսահակյան բնակավայրում, ուստի համայնքի ավագանու կողմից խախտվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2020 թվականի հունվարի 24-ի թիվ 9-Ն որոշման հավելվածով հաստատված

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգի» 17-րդ կետի 1-ին ենթակետի պահանջը, այն է՝ սոցիալական օգնության տրամադրման վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչ է համայնքի բնակիչ հանդիսանալը:

Թիվ 34 որոշման 1-ին կետում «գրառել» բառը փոխարինել «լրացնել» բառով, իսկ «2022 թվականի» թվից և բառից հետո գրառված «բառերը:» փոխարինել «թվով և բառով:» բառերով:

Թիվ 41 որոշման վերնագրում գրառված «ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ» բառերով:

Որոշման նախաբանում հղումը «Գնումների մասին» ՀՀ օրենքի դրույթին սխալ է կատարված, բացի այդ հղումը ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման դրույթին չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջին:

Որոշման նախաբանում ««Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի» թվից և բառից հետո գրառել «1-ին մասի» թիվը և բառը, իսկ «որոշման N 1 հավելվածով, 23-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» և «գ» պարբերություններով,» բառերը փոխարինել «որոշման N 1 հավելվածով հաստատված՝ գնումների գործընթացի կազմակերպման կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» և «գ» պարբերություններով,» բառերով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան, Բագրավան և Իսահակյան բնակավայրերի մանկապարտեզների ապաստարանների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման գնման կարիքը համայնքի ավագանու որոշմամբ անհրաժեշտ է համարել անհետաձգելի և թույլատրել նշված ծառայությունները ձեռք բերել մեկ անձից գնում կատարելու ձևով:Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N: 526-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված՝ գնումների գործընթացի կազմակերպման կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության՝ գնումները կարող են կատարվել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա՝ համայնքի կարիքների համար անհետաձգելի համարված գնումների դեպքում՝ համայնքի ավագանու որոշմամբ:

Թիվ 45 որոշման 2-րդ կետն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համապատասխան դրույթին (ելնելով իրավական ակտի բնույթից):

21.06.2022 թ.